

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**

*Ժամանակաշրջան – 2009 թվական 1 եռամսյակ*

*31 մարտի 2009 թ.*

**Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ**

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 22 նոյեմբերի 2008 թ. կնքված հիմնադիր պայմանագրի: Ընկերությունը տրամադրում է ապահովագրական ոլորտի ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Դեղատան 2/7 հասցեում: Ընկերության ինտերնետային կայքի հասցեն է՝ [www.Reso.am](http://www.Reso.am) :

2009 թ-ի դեկտեմբերի 26-ին Ընկերության կանոնադրական կապիտալը համարվել է 500 միլիոն ՀՀ դրամով և 2010 թ-ի մարտի 31-ի դրությամբ կազմել է 1 070 000 (մեկ միլիարդ յոթանասուն միլիոն): Ընկերության բաժնետերերն են հանդիսանում՝ «Մի Այ Էս Իքուիթի Փարթներս Լիմիթեդ» ՍՊ և «Պոլիգրաֆիա» ՓԲ (նախկին բաժնետեր «ԷՍՋԻԱՅ-Ինվեստ» ՍՊԸ իրավահաջորդ) ընկերությունները՝ յուրաքանչյուրը 50 % բաժնեմասով:

Ընկերությունը 10.11.2008 թ-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել է ոչ կյանքի ապահովագրության իրականացման թիվ ԱՊՈ 0010 լիցենզիա հետևյալ ապահովագրական դասերի գծով՝

- ✓ Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն,
- ✓ Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
- ✓ Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- ✓ Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
- ✓ Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն,
- ✓ Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնավոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ֆինանսական վնասի ապահովագրություն,
- ✓ Առողջության ապահովագրություն,
- ✓ Աջակցության ապահովագրություն:

2010 թվականի մարտի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմել է 28 աշխատակից և 84 պայմանագրային աշխատողներ:

Կորպորատիվ կառավարում

Համաձայն Ընկերության Կանոնադրության Ընկերության կորպորատիվ կառավարումը իրականացվում է եռաստիճան համակարգով՝ Ընդհանուր ժողով, Խորհուրդ, Գործադիր մարմին:

Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը ընտրվում է տարեկան Ընդհանուր ժողովում և իրականացնում է Ընկերության ընդհանուր կառավարումը: Գործադիր մարմինը ձևավորվում է Խորհրդի կողմից և իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարում:

Ընկերության խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից:

**Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության միջոցով (այսուհետ՝ ՀՀՔ), որն իրենից ներկայացնում է հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու կոնկրետ սկզբունքներն ու հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը, կարգերը և ընթացակարգերը:

Ընկերության կողմից ընդունված ՀՀՔ դրույթները հիմնված են հաշվապահական հաշվառումը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների վրա:

Սույնով իրականացված բացահայտումները կրում են տեղեկատվական բնույթ և նպատակ են հետապնդում օգտագործողներին առավել մատչելի դարձնելու սույն ֆինանսական հաշվետվությունները: Բացահայտումները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժան մաս:

***ա. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների: Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ դրամական միջոցների շարժը ներկայացնող հաշվետվության, ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունների արժեքների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ Դրամը: Արժեքների թվաբանական մեծությունները ներկայացվել են հազար դրամներով: Արտարժույթով ներկայացված ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային փոխարժեքները:

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվները և պարտավորությունները հաշվանցվել են և գուտ գումարը ներկայացվել է հաշվապահական հաշվեկշռում, երբ եղել է ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադրություն՝ կամ հաշվարկն իրականացնել գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության կողմից պահանվել են անընդհատության, ներկայացման հետևողականության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները:

***բ. Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը***

Ընկերության եկամուտները և ծախսերը հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հատույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերությունը իր հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարում՝ թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, վկայագրերի թողարկման և եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը: Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերին անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի թողարկումով, որոնց գծով առաջացող եկամուտները և ծախսերը նույնպես ճանաչվում են համաձայնագրերի թողարկման (վավերացման) և համաձայնագրերի գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով:

Վերապահովագրության գծով ծախսերը ընկերության կողմից հաշվեգրվում են ապահովագրական վկայագրերի թողարկման հետ գուգահետ: Ոչ ռեզիդենտ վերապահովագրողին հաշվեգրված վերապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող պարտավորությունները Ընկերության կողմից ճանաչվում են միայն դրանց փաստացի փոխանցման ժամանակ:

***գ. Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը***

Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում գործարքի օրը հրապարակված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- 1) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվել են՝ կիրառելով փակման փոխարժեքը,
- 2) արտարժույթով սահմանված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Դրամային հոդվածների վերագնահատումը ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային միջին փոխարժեքով կատարվում է յուրաքանչյուր անգամ ԿԲ-ի կողմից արտարժույթների հաշվարկային փոխարժեքները հրապարակելիս:

2010 թ-ի մարտի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում հրապարակված հետևյալ հաշվարկային փոխարժեքները՝

1 ԱՄՆ Դոլլար	400.50 ՀՀ Դրամ,
1 Եվրո	538.87 ՀՀ Դրամ,
1 Ռուսական Ռուբլի	13.59 ՀՀ Դրամ:

***դ. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)***

Շահույթի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված միավորների:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինեն հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում բյուջե վճարման (բյուջեից փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է՝ կապված՝

ա) ժամանակավոր տարբերությունների, որը իրենից ներկայացնում է ակտիվի (պարտավորության) հաշվեկշռային և հարկային արժեքների տարբերությունը, կամ

բ) չօգտագործված հարկային վնասը և (կամ) գեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվել է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները կամ հարկային վնասը:

### ***ե. Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական գործիքների, մասնավորապես վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի հիման վրա, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց համար բացակայում է իրական արժեքի վստահելի չափման միավոր: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվել են ամորտիզացված կամ սկզբնական արժեքով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները Ընկերությունը ճանաչել է վերջիններիս գնելու իր պարտավորության պահից: Այս պահից ի վեր ճանաչվել են այս ակտիվների իրական արժեքների փոփոխման հետևանքով առաջացած եկամուտները և ծախսերը:

Մինչև մարման ժամկետը պահվող (ՄՄԺՊ) ակտիվները ճանաչվել են Ընկերությանը փոխանցման պահից:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ չափվել են իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրա դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընկերության կողմից վաճառքի համար մատչելի արժեթղթերը վերագնահատվել են՝ ներկայացվելով իրական արժեքով: Արժեթղթերի գնի ճշտումները իրականացվել են ՀՀ ԿԲ կողմից տրված մինչև մարում եկամտաբերության կորի սոկոսադրույքների հիման վրա: Վերագնահատման արդյունքները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում՝ եկամուտների և ծախսերի բաժնում:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվի մի մասը ապաճանաչում է, երբ կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ակտիվը (կամ ակտիվի մի մասը): Ընկերությունը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե պայմանագրում սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները իրացվում են, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ Ընկերությունը հրաժարվում է այդ իրավունքից:

Ապաճանաչման ժամանակ այլ կողմին փոխանցված ակտիվի (կամ ակտիվի մի մասի) հաշվեկշռային արժեքի և հետևյալ երկու մեծությունների՝ ստացված կամ ստացման ենթակա մուտքերի ու ակտիվի իրական արժեքի ճշգրտումների համար արդեն որպես եկամուտ կամ ծախս հաշվեգրված հանրագումարների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե Ընկերությունը փոխանցում է ամբողջ ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, սակայն դրանով հանդերձ ստեղծում է նոր ֆինանսական ակտիվ կամ ստանձնում է նոր ֆինանսական պարտավորություն, ապա Ընկերությունը ճանաչում է այդ նոր ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իրական արժեքով և ճանաչում է գործարքից շահույթը կամ վնասը՝ հիմք ընդունելով հետևյալ երկու մեծությունների տարբերությունը՝

ա) մուտքերը,

բ) վաճառված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքին գումարած ստանձնած նոր ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, հանած նոր ձեռք բերված ֆինանսական ակտիվների իրական արժեքը և գումարած կամ հանած այդ ակտիվի իրական արժեքն արտացոլելու համար նախկինում կատարված ճշգրտումները, որոնք ճանաչվել էին որպես եկամուտ կամ ծախս:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները վաճառքի դեպքում ապաճանաչվում են, և գնորդից ստացվելիք համապատասխան գումարները ճանաչվում են այն օրվա դրությամբ, երբ Ընկերությունը պարտավորվել է վաճառել այդ ակտիվները:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքները ապաճանաչվում են այն օրը, երբ փոխանցվում են Ընկերության կողմից:

### ***զ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ***

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցները:

### ***է. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ***

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Գործող վարձակալված ակտիվները Ընկերության կողմից արտահաշվեկշռում ցույց են տրված իրական արժեքով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի գծով վարձակալության ծախսերը հաշվեգրվել են:

Մաշվածությունը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձման ամսաթվից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են

- տնտեսական գույքի համար – 5 տարի,
- համակարգչային սարքավորումների համար – 1 տարի,
- տրանսպորտային միջոցների համար – 5 տարի,
- այլ հիմնական միջոցների համար – 5 տարի:

Մինչև 50000 (հիսուն հազար) ՀՀ Դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Հետագա ծախսումները, որոնք վերաբերվել են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվել են ակտիվի հաշվեկշռի արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ կլինեն, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր հետագա ծախսումները ճանաչվել են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի:

**Ծանոթագրություն 3. Դրամական միջոցներ**

Ընկերության դրամական միջոցները տեխաբաշխված են ինչպես ՀՀ ռեզիդենտ բանկերում և կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում	121,204.0	113,535.0
- Բանկային հաշիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(1,212.0)	(1,135.0)
Ընդամենը	119,992.0	112,400.0

**Ծանոթագրություն 4. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ապահովագրության գծով ստացվելիք գումարները կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովադիրներից	23,270.0	113,507.0
- Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերաապահովագրողների նկատմամբ	789.0	22,280.0
- Մուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներից	-	545.0
- Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(233.0)	(1,141.0)
- Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(8.0)	(223.0)
Ընդամենը	23,818.0	134,968.0

**Ծանոթագրություն 5. Ընթացիկ ավանդներ**

Ընկերության ընթացիկ ավանդները հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ավանդներ ռեզիդենտ բանկերում	984,372.0	935,563.0
- Ավանդների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(9,843.0)	(9,356.0)
Ընդամենը	974,529.0	926,207.0

**Ծանոթագրություն 5. Ընթացիկ փոխառություններ**

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Ընկերության կողմից տրամադրված ընթացիկ փոխառությունները կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ռեզիդենտ այլ անձանց տրամադրված փոխառություններ	1,277.0	1,274.0
- Ոչ ընթացիկ փոխառությունների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(13.0)	(13.0)
Ընդամենը	1,264.0	1,261.0

**Ծանոթագրություն 10. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ**

Ընկերության դեբիտորական պարտքերն և կանխավճարները հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Կանխավճարներ մատակարարներին	1,788.0	3,066.0
- Կանխավճարներ ապահովադիրներին հատուցումների գծով	1,678.0	6,222.0
- Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով	-	5,105.0
- Դեբիտորական պարտքերի և կանխավճարների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(18.0)	(93.0)
Ընդամենը	3,448.0	14,300.0

**Ծանոթագրություն 11. Ստացվելիք տոկոսներ**

Ընկերության կողմից հաշվեգրված և ստացվելիք տոկոսները հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով	6,602.0	14,942.0
- Ռեզիդենտ այլ անձանց տրամադրված փոխառությունների գծով	3.0	12.0
Ընդամենը	6,605.0	14,954.0

**Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**  
 ա. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Համակարգ- չային և կապի միջոցներ	Փոխա- դրամի- ջոցներ	Այլ հիմնա- կան միջոցներ	Հիմն. միջոց. գծով կապիտալ ներդ.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>							
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին (01.01.2009 թ.)</b>	-	-	-	-	-	-	-
Ավելացում	-	7,105.0	-	2,801.0	-	-	9,906.0
Օտարում	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	-	7,105.0	-	2,801.0	-	-	9,906.0
Ավելացում	-	4,269.0	-	759.0	-	-	5,028.0
Օտարում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	-	11,374.0	-	3,560.0	-	-	14,934.0
<b>Կուտակված մաշվածություն</b>							
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին (01.01.2009 թ.)</b>	-	-	-	-	-	-	-
Ավելացում	-	776.0	-	740.0	-	-	1,516.0
Օտարում	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	-	776.0	-	740.0	-	-	1,516.0
Ավելացում	-	1,546.0	-	1,423.0	-	-	2,969.0
Օտարում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	-	2,322.0	-	2,163.0	-	-	4,485.0
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>							
<b>Հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	-	9,052.0	-	1,397.0	-	-	10,449.0
<b>Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	-	6,329.0	-	2,061.0	-	-	8,390.0

բ. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալ ներդ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին (01.01.2009 թ.)</b>	-	1,250.0	-	-	-	1,250.0
Ավելացում	198.0	1,250.0	-	-	-	1,448.0
Օտարում	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	198.0	2,500.0	-	-	-	2,698.0
Ավելացում	-	-	-	-	-	-
Օտարում	-	-	-	-	-	-
Վերագնահատում*	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	198.0	2,500.0	-	-	-	2,698.0

<b>Կուտակված մաշվածություն</b>						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին (01.01.2009 թ.)</b>	-	175.0	-	-	-	175.0
Ավելացում	13.0	294.0	-	-	-	307.0
Օտարում	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	13.0	469.0	-	-	-	482.0
Ավելացում	20.0	625.0	-	-	-	645.0
Օտարում	-	-	-	-	-	-
Վերագնահատում*	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	33.0	1,094.0	-	-	-	1,127.0

<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>						
<b>Հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.03.2010 թ.)</b>	165.0	1,406.0	-	-	-	1,571.0
<b>Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին (31.12.2009 թ.)</b>	185.0	2,031.0	-	-	-	2,216.0

**Ծանոթագրություն 22. Ապահովագրության գծով վճարելիք գումարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի ապահովագրության գծով վճարվելիք հետևյալ գումարները՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ռեզիդենտ ապահովադիրներին վճարվելիք հատուցումներ	598.0	675.0
- Ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարներ	92.0	29.0
Ընդամենը	690.0	704.0

**Ծանոթագրություն 23. Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի ապահովագրության գծով փոխանցվելիք հետևյալ գումարները՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	38,716.0	48,242.0

**Ծանոթագրություն 26. Չվաստակած ապահովագրավճարների պահուստ**

Ընկերության Չվաստակած ապահովագրավճարների պահուստի մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ռեզիդենտների գծով	88,288.0	161,362.0

**Ծանոթագրություն 27. Պահանջների (վնասների) պահուստ**

Ընկերության Պահանջների (վնասների) պահուստի մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	11,104.0	19,709.0
- Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	3,287.0	3,287.0
Ընդամենը	14,391.0	22,996.0

**Ծանոթագրություն 30. Այլ վճարվելիք գումարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի հետևյալ այլ վճարվելիք գումարները՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով	5,707.0	3,505.0
- Կրեդիտորական պարտքեր սոցիալական ապահովության վճարումների գծով	2,936.0	36.0
- Հիմնական և պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ	2,011.0	834.0
- Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	962.0	566.0
- Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ	556.0	556.0
Ընդամենը	12,172.0	5,497.0

**Ծանոթագրություն 31. Այլ ընթացիկ պարտավորություններ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի հետևյալ այլ ընթացիկ պարտավորությունները՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով	8,339.0	11,853.0

**Ծանոթագրություն 37. Կանոնադրական կապիտալ**

Կանոնադրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Կանոնադրական կապիտալ	1,070,000.0	1,070,000.0

**Ծանոթագրություն 41. «Չբաշխված շահույթ (վնաս)**

Չբաշխված շահույթի (վնասի) մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Նախորդ տարվա վերջ	Հաշվետու ժամանակաշրջան
- Ընթացիկ տարվա	(86,046.0)	(86,334.0)
- Նախորդ տարվա	(288.0)	(18,210.0)
Ընդամենը	(86,334.0)	(104,544.0)

**Ծանոթագրություն 43. Եկամուտներ ապահովագրավճարներից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ կյանքի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ	-	130,969.0

**Ծանոթագրություն 44. Եկամուտներ միջնորդավճարներից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ ռեզիդենտ միջնորդներից ստացվելիք միջնորդավճարների գծով եկամուտներ	-	2,779.0

**Ծանոթագրություն 46. Եկամուտներ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով եկամուտներ	-	21,492.0

**Ծանոթագրություն 47. Եկամուտներ սուբրոգացիայից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ կյանքի ապահովագրության գծով սուբրոգացիայի հետևանքով ռեզիդենտների նկատմամբ առաջացած պահանջներից եկամուտներ	-	631.0

**Ծանոթագրություն 55. Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից	-	10,361.0

**Ծանոթագրություն 56. Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստի հակադարձումից**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստի հակադարձումից	-	22,269.0

**Ծանոթագրություն 60. Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Պահանջների (վնասների) պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով եկամուտներ	-	2,432.0

**Ծանոթագրություն 63. Հատուցումներ ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ռեզիդենտ ապահովադիրներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումների գծով	-	55,273.0

**Ծանոթագրություն 66. Ծախսեր ապահովագրական միջնորդների գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր	-	97.0

**Ծանոթագրություն 67. Ծախսեր վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր	-	12,052.0

**Ծանոթագրություն 68. Այլ ծախսեր**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Դադարեցված ապահովագրական վկայագրերից ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարների գծով ծախսեր	-	103.0
- Ռեզիդենտներին վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր	-	20.0
Ընդամենը	-	123.0

**Ծանոթագրություն 75. Ծախսեր չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձևավորման գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Չվաստակած ապահովագրավճարների պահուստների ձևավորման ծախսեր ռեզիդենտներին հետ կնքված պայմանագրերի գծով	-	89,435.0

**Ծանոթագրություն 76. Ծախսեր պահանջների (վնասների) պահուստի ձևավորման գծով**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների ձևավորման ծախսեր	-	33,306.0

**Ծանոթագրություն 79. Ներդրումներից ստացվող տոկոսային եկամուտներ**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներից	24.0	16,303.0

**Ծանոթագրություն 81. Այլ տոկոսային եկամուտներ**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված այլ ընթացիկ ներդրումների գծով	-	96.0

**Ծանոթագրություն 87. Այլ եկամուտներ**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ	28.0	139,282.0

**Ծանոթագրություն 88. Ակտիվների հնարավոր կորուստներին կատարվող հատկացումներ**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Կորուստների վերականգնում	-	4,985.0
- Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ	-	(5,615.0)
Ընդամենը	-	(630.0)

**Ծանոթագրություն 89. Ընդհանուր վարչական ծախսեր**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Ծախսեր անձնակազմի գծով	-	29,264.0
- Վարձակալության ծախսեր	-	3,383.0
- Կապի և հաղորդակցության միջոցների ծախսեր	40.0	2,168.0
- Գործուղման ծախսեր	-	778.0
- Այլ կառավարչական ծախսեր	-	10,861.0
Ընդամենը	40.0	46,454.0

**Ծանոթագրություն 90. Այլ ծախսեր**

	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
- Հասարակական կապերի գծով ծախսեր	-	3,511.0
- Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	-	2,877.0
- Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	313.0	645.0
- Տուգանքների և տույժերի գծով այլ ծախսեր	-	250.0
- Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր	-	120,145.0
- Այլ ծախսեր	-	26.0
Ընդամենը	313.0	127,454.0

**Ծանոթագրություն 93. «Արտահաշվեկշռային հաշիվներ»:** Ծանոթագրություն 93-ի տարրերն են՝

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ	-	66,500
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	-	186,659,410

Ապահովագրական ընկերության գործադիր  
տնօրեն

\_\_\_\_\_

Մ. Սահակյան

Գլխավոր հաշվապահ

\_\_\_\_\_

Գ. Մանուկյան